ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Աշակերտի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՀԱՄՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ԱՆՆԱ ՂԱՆԴԻԼՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՋՈԼԱՔԱՐԻ Ալ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ*

Ք. Մարտունի

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....3

ԳԼՈՒԽ I

ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ……5

ԳԼՈՒԽ II

ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ…… 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ…….....15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ասել է Մ.Կալինին՝ ուսուցիչը աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն: Սակայն մարդուն ձևավորելու և կյանքին պատրաստելու համար միայն գիտելիքներ տալը քիչ է: Առաջին և կարևոր գործոնը երեխայի մեջ ինքնուրույնություն սերմանելն է: Եվ միայն հանճարեղ ուսուցիչը կարող է աշակերտին մղել ինքնուրույն գործունեության:

Անդրադառնալով մեր հետազոտման թեմային՝ նշենք, որ մեր ուսումնասիրության թեման է <<Աշակերտի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը>>:

Ստորև ներկայացրել ենք հետազոտական աշխատանքի նպատակները, խնդիրները, աշխատանքի նշանակությունը և արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել աշակերտի ինքնուրույն գործունեությունը և դրա կազմակերպման ձևերը: Վեր հանել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են աշակերտի ինքնուրույն գործունեությանը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները.

1. ՈՒսումնասիրել աշակերտի ինքնուրույն գործունեությունը :
2. Վեր հանել այն յուրահատկությունները, որոնք բնորոշ են աշակերտի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերին:
3. Գտնել միջոցներ, մեթոդներ, որոնք ավելի կնպաստեն աշակերտի ինքնուրույնության բարձրացմանը:

Հետազոտության նշանակությունը: Աշակերտի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերի համակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել ներկա վիճակը, բացահայտել առավելությունները և թերությունները այդ ուղղությամբ:

Հետազոտության արդիականությունը: Աշակերտների ինքնուրույն գործունեության զարգացման խնդիրը այժմ դարձել է մեր դպրոցների ամենանուրբ խնդիրներից մեկը: Մեր

ուսումնասիրության թեման արդիական է այնքանով, որ դպրոցը պետք է սովորեցնի աշակերտին լուծելու զանազան պրպտողական, ճանաչողական և գործնական խնդիրներ: Դպրոցում պետք է ուսուցանել խնդրի լուծման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք այսօր համագործակցային ուսուցման բովանդակությունն են կազմում, որպեսզի վաղվա ճանապարհին աշակերտը պատրաստ լինի կյանքում նոր խնդիրների ինքնուրույն լուծմանը:

ԳԼՈՒԽI
ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Նախ նշենք, որ ինքնուրույնությունը յուրաքանչյուր անձի ներհատուկ և բնազդային հատկություն է: Մարդն իր ծնված օրվանից ի վեր ձգտում է ինքնուրույնության: Օրինակ՝ տարբեր տարիքային փուլերում երեխան փորձում է իրեն հասանելի թվացող գործողությունները կատարել ինքնուրույն: Այսինք՝ սա մի բնազդային հատկություն է, որ երեխան ունի, և եթե մենք չենք խանգարում այս հատկության զարգացմանը, ապա այն ինքնաբուխ զարգանում է և արդյունքում ունենում ենք կայացած անձ և անհատ, ով հստակ գիտակցում է՝ ինչ է ցանկանում: Երեխայի ինքնուրույնության ձևավորմանը նպաստում է նաև նրան ազատելը սխալվելու վախից:

Աշակերտի ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացման խնդիրները այժմ դարձել են մեր դպրոցների ամենավճռական և առաջնահերթ խնդիրներից, որին պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել:

Երեխային դպրոցին նախապատրաստել ասելով շատ ծնողներ և նույնիսկ մանկավարժներ հասկանում են գիտելիքներով (գրել, կարդալ, թվաբանական հմտություններ) զինելը: Սակայն, առաջին հերթին երեխան պետք է ունենա ինքնուրույնություն:

Գիտելիքը դեռ զարգացում չէ: Գիտելիքով հարուստ երեխաները հաճախ սոցիալապես տհաս են, հուզականորեն անկայուն և զուրկ ինքնուրույնությունից: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ երեխան մի բանի հաշվին մեկ այլ բան է

ձեռք բերում: Այսինքն, երբ երեխային զրկելով խաղից և ինքնաբուխ լինելու հնարավորությունից, պարտադրում ենք գիտելիք սերտել և տեղեկություններ կուտակել, կորցնում ենք անձնական զարգացման և ինքնուրույնության ձևավորման հնարավորությունները[1]:

Այս ամենի հետ մեկտեղ՝ աշակերտների մեջ չենք կարող ստեղծագործական միտք զարգացնել, եթե սովորելու ընթացքում նրանք սահմանափակվել են գլխավորապես վերարտադրողական գործունեությամբ, և բոլոր գիտելիքները մատուցվել են պատրաստի վիճակում:

Ինքը՝ մտածողությունը, պատմականորեն առաջ է եկել մարդու գործունեության պրոցեսում, կյանքի կողմից առաջադրված տարբեր խնդիրներ լուծելու անհրաժեշտությունից: Նպատակին հասնելու ճանապարհին հանդես եկած դժվարությունները առաջացնում են մտքի ակտիվ աշխատանք: Մարդը ըմբռնում է խնդիրը և ապա՝ փնտրում լուծման ուղիներ, դժվարությունները հաղթահարելու միջոցներ:

Հաճախ, բարձր առաջադիմությամբ երեխաները, ավարտելով տարրական դպրոցը, հաջորդ դասարաններում հանդիպում են դժվարությունների՝ դասագրքի նյութերը լինում են բավական ծավալուն, աշակերտը ֆիզիկապես չի կարողակնում անգիր սովորել և այս փաստը դառնում է ետ մնալու պատճառ: Այսպիսով՝ ուսուցչի գերխնդիրն է դառնում, որ աշակերտները նյութը ոչ թե մեխանիկորեն անգիր անեն և մտապահեն, այլ այնպես անել, որ գիտակցաբար յուրացնեն:

Այսքանից կարելի է եզրակացնել, որ գիտելիքների գիտակցական յուրացումը պահանջում է սովորողների ակտիվություն, ինքնուրույնություն և պետք է բացառվի ֆորմալիզմը՝ ձևամոլությունը, որը չարիք է ցանկացած

[1]Տասը հարց ու պատասխան 3-6 տարեկան երեխաների մասին,3-4 էջ:

բնագավառում: Ձևամոլությունը առանց բովանդակությունը հասկանալու նյութն անգիր անելու գործընթացն է, իսկ դրա առկայության պայմաններում սովորողը նյութը լրիվ չի ընկալում, հիշում է այն, սակայն չի կարողանում կիրառել[2]: Այս գործողությունները արգելակում են երեխաների զարգացումը և ավելի բարձր դասարաններում երեխաները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքի, ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրանքի ծավալը նրանց ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեմպը՝ դանդաղ:

Նշենք նաև, որ երեխայի ինքնուրույնության ձևավորման գործում շատ մեծ և ծանրկշիռ դեր ունեն երեխաների ծնողները:

Երեխան դպրոց հաճախելուց առաջ արդեն իսկ պետք է լիարժեք տիրապետի ինքնուրույն ուտելու, իր պայուսակը դասավորելու, սանհանգույցից կոկիկ օգտվելու, իրեն հուզող հարցերը տալու, խնդրանքն արտահայտելու և այլ նմանատիպ տարրական հմտությունների: Բայց, հաճախ, ընտանիքում, որտեղ երեխային ամեն քայլափոխին կամ ծառայում են կամ թելադրում, այս հմտություններին շատ ուշադրություն չեն

[2]Գիտական հոդվածներ,<<Մխիթար Գոշ>>, 2020, 87 էջ:

դարձնում: ԵՎ ինքնուրույնության պակասը ամենաշատն է խանգարում դպրոցում: Պետք է երեխայի մոտ ձևավորել պատասխանատվության զգացում, հասկացնելով, որ սովորելն իր պատասխանատվությունն է, ոչ թե ծնողի: Երեխային երևակայական խաղի մեջ ներգրավելով՝ կարելի է նրան վստահեցնել, որ դպրոցում սովորելն էլ իր աշխատանքն է, որ պետք է կատարի պատասխանատվությամբ, ինչպես դա անում են հայրը և մայրը: Կարևոր է երեխային թույլ տալ ինքնուրույն կատարել տնային առաջադրանքները, առանց միջամտելու նրա մտածողության գործընթացին:



ԵՎ պետք է հիշել, որ խրախուսանքը ավելի մեծ եռանդ է տալիս սովորելու համար, քան պատիժը: Երեխային պետք է տալ ավելի շատ ինքնուրույնություն, սխալվելու, իրենց սխալը վերլուծելու, հասկանալու և դրա հիման վրա գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն: Եկեք ընդունենք բոլոր երեխաներին այնպիսին, ինչպիսին ծնվել են և փորձենք զարգացնել նրանց մեջ կյանքի համար կարևոր որակներ և հիշենք՝

Եթե երեխան անընդհատ քննադատվում է,

Նա սովորում է մեղադրել:

Եթե երեխան ծաղրանքի է ենթարկվում,

Նա դառնում է ամաչկոտ:

Եթե շրջապատող աշխարհը թշնամանքով է վերաբերվում,

Երեխան պատրաստվում է պայքարի:

Եթե երեխան ապրում է ամոթանքի ենթարկվելով,

Ապա նրան չի լքում մեղքի զգացումը:

Եթե երեխան ապրում է համաձայնությամբ,

Ապա նա համբերատար է լինում:

Եթե երեխան խրախուսվում է քնքշորեն,

Նա վստահում է մարդկանց:

Եթե երեխային արժանապատվորեն են վերաբերվում,

Նա սովորում է գնահատել:

Եթե երեխան ապրում է ազնվությամբ,

Արդարամիտ է դառնում:

Եթե երեխան ապրում է անվտանգության մեջ,

Սովորում է հավատալ:

Եթե երեխան խրախուսվում է,

Սովորում է գնահատել իրեն:

Եթե երեխան ընդունված է և բարեկամությամբ է շրջապատված,

Սեր կգտնի այս աշխարհում[3]:

ԳԼՈՒԽ II

ԱՇԱԿԵՐՏԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Պատմիր ինձ և ես այն կմոռանամ,

ցույց տուր և ես կհիշեմ ,

ինձ հետ կատարիր և ես կսովորեմ…

[3]Երբ ընտանիքում ծնվում է հատուկ կարիքներով երեխա,Ն. Հ. Վանյան,Երևան << Ասողիկ>> հրատարակչություն, 29 էջ:

Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդները: Այն պահից, երբ բացահայտվեն ավելի արդյունավետ մեթոդներ, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը[4]:

Կրթական դրական մեթոդների միջոցով կարելի է աշակերտների մոտ գործունեության նկատմամբ ստեղծագործական մոտեցում ձևավորել և զարգացնել միայն աշակերտներին սիստեմաբար մասնակից դարձնելով պրպտողական բնույթի աշխատանքներին, կանգնեցնելով նրանց հետզհետե բարդացող ճանաչողական խնդիրների լուծման անհրաժեշտության առջև:

Սովորողի ինքնուրույնությունը զարգացող կառուցվածք է, և որպես անձի կարևոր որակ դրսևորվում է նախադպրոցական տարիքում և զարգանալով դառնում է անձի կայուն հատկություն: Երեխայի մտավոր զարգացումը, հոգևոր կյանքը վճռականորեն կախված են մանկավարժական կուլտուրայից՝ ինչպես երեխային սովորեցնել մտածել, ինչպիսի միջոցներով զարգացնել մտավոր ընդունակությունները և նպաստել ինքնուրույնության զարգացմանը:

Ինքնուրույնության զարգացման նպատակով ուսուցիչները հաճախ կազմակերպում են ինքնուրույն աշխատանքներ: Եթե ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, ապա ինքնուրույն աշխատանքը ուսումնական կազմակերպման ձև է: Ինքնուրույն աշխատանքի և ինքնուրույնության միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը՝ մի կողմից արդեն ձեռք բերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատի որակ, իսկ ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը հնարավոր է իրականացնել միայն սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինքնուրույն գործունեության կազմակերպումը և անցկացումը պահանջում է հատուկ

[4]Ա. Մ. Արզումանյան, Գրականության դասավանդման մեթոդներ, ձևեր, Երևան, 2014, 3 էջ:

մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը և դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: ԵՎ, առհասարակ, պետք է շեշտենք մի կարևոր հանգամանք. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքի բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարդացնել: Սակայն, պետք է նշենք, որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավական բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որ համապատասխանում է թույլ աշակերտների ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ կա թաքնված: Եթե թույլ կարողությունոր ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով, այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև պիտի նպատակ դնի՝ սկզբում աշխատել ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել ավելի բարդ նյութեր:

Ամեն մի խնդիր պահանջում է հարց, որի պատասխանը չի գտնվում անմիջապես: Հարկ է լինում այն փնտրել ինքնուրույնաբար: Սակայն խնդիրը ոչ բոլոր դեպքերում է զարգացնում ստեղծագործական մտածողությունը, ինքնուրույնությունը: Եթե խնդիրը լուծվում է ուսուցչի կամ դասագրքի հեղինակի ցուցադրած պատասխանի օրինակով, ապա նրա լուծումը աշակերտից ինքնուրույն ստեղծագործական մտածողություն չի պահանջում: Աշակերտի գործողությունը նման դեպքում կրում է վերարտադրողական բնույթ,որին մենք արդեն անրադարձել ենք մեր աշխատանքի նախորդ գլխում: Այլ բան է , երբ աշակերտին լուծման պատրաստի օրինակներ չի տրվում և նա ինքը պետք է գտնի լուծման ուղին: Այդ դեպքում խնդրի լուծումը հրահրում է մտածողության ինքնուրույն աշխատանքի, նպաստում նրա ստեղծագործական զարգացմանը:

Սովորողի ստեղծագործական և ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը և դրա հետ կապված գիտելիքների ինքնուրույն համալրման գործընթացը ավելի արդյունավետ է դառնում, երբ աշակերտը տեսնում է իր կատարած աշխատանքի արդյունքը: Սովորողի ինքնուրույնությունը կարելի է ստուգել<<Անավարտ նախադասություն>>մեթոդով:

[5]

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումը օգնում է երեխաներին ինքնուրույն ամփոփել դասը:

Տարրական դասարաններում արդյունավետ կլինի նկարների միջոցով խնդիրներ կազմելը, որը կնպաստի երեխայի ինքնուրույն մտածողության զարգացմանը:

Օրինակ՝ կազմել խնդիր ըստ նկարի:

[5] Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020,40 էջ:

[6]

Այսպիսով, ուսուցիչը ոչ թե պատրաստի գիտելիքներ է տալիս աշակերտներին, այլ խթանում է սովորողների ինքնուրույն որոնմանը:

Ինքնուրույն տրամաբանելու, եզրակացություններ անելու ունակության զարգացման լավագույն միջոցներից մեկն այն է, որ մենք սահմանումը ոչ թե պատրաստի ներկայացնենք երեխային, այլ փաստերը դիտել տալով, պահանջենք, որ նա եզրակացության գա, ընդհանրացում կատարի: Օրինակ արմատի ուսուցման համար գրատախտակին գրում ենք՝

արտագրել	ժամանակ	տարօրինակ
ձեռագիր	ժամացույց	օրինական
գրական	անժամանակ	յուրօրինակ

Դիտել ենք տալիս այս շարքերը և պահանջում,որ աշակերտները որոշեն, թե յուրաքանչյուր շարքում բառերի որ մասն է կրկնվում, ապա ընդգծում ենք այդ մասը: Այնուհետև որոշում ենք, թե որ իմաստն է յուրաքանչյուր շարքում ընդհանուր: Այս վերլուծությունից հետո դասարանի հետ միասին գալիս ենք եզրահանգման՝ ընդգծված մասերը արմատներ են:

ԵՎ վերջապես, ոչ բոլոր աշակերտներն են, որ կարող են գիտնականներ դառնալ, բայց դառնալ ինքնուրույն մարդ, ով ընդունակ է վերլուծել իր արարքները, վարքը, խնդիրները, իրացնել իրեն շրջակա աշխարհում պարտավոր է: Այս դեպքում ուսուցումը ենթադրում է ակտիվ մեթոդների կիրառում,մեթոդներ, որոնք նախատեսում են ոչ թե ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների մատուցում, այլև ուսուցման ակտիվ, ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռք բերում:

[6] https://lib.armedu.am/resource/24195

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գալով մեր աշխատանքի եզրահանգմանը՝ պետք է շեշտել մի փաստ. Ինչպես, որ մայրն է ուրախանում, երբ իր երեխան սկսում է ինքնուրույն քայլել, այնպես էլ ուսուցիչը պիտի ուրախանա, երբ իր սանը դառնում է ինքնուրույն և համարձակ մտածող: Գիտությունը կարող է առաջ գնալ միայն մտքերի ազատ բախման ճանապարհով: Ահա, թե ինչու ուսուցիչը պիտի երեխայի համար նախ մտածելու լայն հնարավորություն ստեղծի: Այս ամենը կարելվույն չափով հիմնավորել ենք մեր աշխատանքի գլուխներում:

Մեր կատարած ուսումնասիրության հիման վրա եզրակացրել ենք հետևյալները.

- Ինքնուրույնությունը յուրաքանչյուր մարդու կյանքում թերևս ամենակարևոր գործոններից մեկն է: Ոչ բոլոր աշկերտներն են, որ կարող են դառնալ գիտնականներ, բայց դառնալ ինքնուրույն մարդ անհրաժեշտ է: Իսկ ուսուցչի գերխնդիրն է նպաստել երեխաների մեջ այդ որակի զարգացմանը:
- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողները առավել խորը և ճկուն գիտելիք են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:
- Սովորողների ինքնուրուրույն ուսումնական գործունեության համար նախատեսած առաջադրանքների բնույթը անհրաժեշտ աստիճանաբար բարդացնել:
- Չի կարելի թույլ ընդունակություններով աշակերտներին անընդհատ առաջադրել դյուրին առաջադրանքներ: Դրա հետևանքով կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է սկզբում աշխատի ներառել պարզ առաջադրանք,

ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծի առավել բարդ նյութեր:

- Ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված առաջադրանքները պետք է աշակերտներից պահանջեն կամային ջանք, առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:
- Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել այնպիսի իրադրություն, որ երեխան ձգտի ինքնուրույն հասնել դրված նպատակներին, յուրացնի իր համար մատչելի գործելու միջոցները, հնարները և ամենակարևորը՝ սովորի իր առջև որևէ ինքնուրույն նպատակ դնել և լուծել առաջադրած խնդիրը:
- Դպրոցը պետք է սովորեցնի աշակերտին լուծելու զանազան պրպտողական, ճանաչողական և գործնական խնդիրներ: Դպրոցում պետք է ուսուցանել խնդրի լուծման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք այսօր համագործակցային ուսուցման բովանդակությունն են կազմում, որպեսզի վաղվա ճանապարհին աշակերտը պատրաստ լինի կյանքում նոր խնդիրների ինքնուրույն լուծմանը:

Ուսուցիչը չպիտի բավարարվի աշակերտին պատրաստի գիտելիքներ մատուցելով, չէ որ պատրաստի գիտելիքների մեքենայաբար ընկալումը միակողմանի և կրավորական գործողություն է և շատ քիչ է նպաստում ինքնուրույն մտածելու

ունակությունների զարգացմանը:

[7]

Երեխան պիտի իմանա ցանկացած երևույթի պատճառն ու հետևանքը. Դա գիտելիքի գիտակցված յուրացման լավագույն միջոցն է: Դա կօգնի աշակերտին երազել,հայտնագործել և ապագայում գիտնական, գյուտարար և արվեստագետ դառնալ:

Եվ յուրաանչյուր ուսուցիչ պետք է հիշի, որ հենց աշակերտական նստարանին է ձևավորվում ապագա մտածողն ու ստեղծագործողը…

[7]Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 17 էջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տեսական գրականություն

1. Ա.Մ. Արզումանյան, Գրականության դասավանդման մեթոդներ, ձևեր, Երևան, <<ԱՀԱ Պոլիգրաֆ>>հրատարակչություն, 2014, 100 էջ:
2. **Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, մանկավարժություն, Ռ. ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, 2008, 126 էջ:**
3. **Գիտական հոդվածներ, <<Մխիթար Գոշ>> , 2020, 407 էջ:**
4. Երբ ընտանիքում ծնվում է հատուկ կարիքներով երեխա,Ն. Հ. Վանյան, Երևան,<<Ասողիկ>> հրատարակչություն, 2008.-38 էջ:
5. **Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, 74 էջ:**
6. **Տասը հարց և պատասխան 3-6 տարեկան երեխաների մասին,24 էջ:**

Համացանցային աղբյուրներ

1. https://lib.armedu.am/resource/24195
   https://znanio.ru/media/-----2615119

Դասապլան

ՈՒսուցիչ՝Աննա Ղանդիլյան

Առարկա	մայրենի	Ամսաթիվ		Կիսամյակ	I	դասարան	2
Թեմա	Երեք աղջիկների հեքիաթը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, քարտեր որոնց վրա կա հանելուկներ գրված, խաղիկ տաղիկներ առած- ասացվածքներ օրորոցային երգեր, շուտասելուկներ և հաշվելուկներ:						
Դասի նպատակը՝	ԻՄԱՆԱ՝ .ժողովրդական բանահուսության նմուշներ : .խաղիկ- տաղիկներ, հանելուկներ, շուտասելուկներ: . առած-ասացվածքներ . օրորոցայիններ . հեքիաթներ						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ դասը տեղի է ունեցել							
Վերջնարդյունքներ	ԿԱՐՈՂԱՆԱ՝ . վարժ կարդալ, .վերարտադրող կարդացածը . կատարել տեքստային աշխատանքներ . բնութագրել կերպարները, . կատարել վերլուծական աշխատանքներ . կատարել լեզվական աշխատանքներ:						
Գործունեությունն Եր / ժամ/տևողություն/	ՈՒսումնական գործունեություն աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ուսուցիչներ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ			
Դաս 45 ր 5ր տնային ստուգում Դասի հարցում՝ 25 15ր նոր նյութի հանձնարարում 5ր ամփոփում, տնային հանձնարարութ-յուն	Բացեն դասագրքերը, Պատրաստվեն նոր դասին; Ներկայացնել տնային աշխատանքները: Պատասխանեն հարցերին, քերականական աշխատանք կատարելու համար դասից դուրս գրեն բառեր,	Ողջունում է դասարանին, Զրույցի միջոցով բացատրում է դասը, .Հիշեցնում է դասի թեման. .Ստուգում է տնային աշխատանքները. .Բացատրում է անհասկանալի մասերը. . Հանձնարարում է միմյանց շարունակելով կարդալ դասը.	Ի՞նչ հանելուկ սովորեցինք, ի՞նչ է դարձվածքը, ի՞նչ է խաղիկ-տաղիկը, թզուկը չա՞ր, էր թե՞ բարի. Ինչ պայման առաջարկեց թզուկը.	Մտագրոհ Նախապատրաստական զրույցներ, Խմբային աշխատանք-ներ, Համագործակցային մեթոդ			

	կատարեն վերժություններ	. բացատրում է միտքը, նոր, անծանոթ բառերը,			
Տնային աշխատանք	Հանձնարարել գրել տնային առաջադրանք 2-ը , դասից առանձնացնել եզակի և հոգնակի թվով գործածված բառերը:				

Մեթոդմիավորման նախագահ՝ Ա. Ղարիբյան----------

Փոխտնօրեն՝ ----------Ն.Մխիթարյան

Հավելված 2

Դասապլան

ՈՒսուցիչ՝ Աննա Ղանդիլյան

Առարկա	մայրենի	Ամսաթիվ		Կիսամյակ	I	դասարան	2
Թեմա	<<Կաթիլը>>						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, կավիճ, գրիչ, տետր, քարտեր, առաջադրանքների թերթիկներ						
Դասի նպատակը՝	ԻՄԱՆԱ՝ . վարժ կարդալ, . բառերը վանկերի բաժանելու կանոնները . բնական երևույթների առաջանալը . պատմվածքի սյուժեն						
Վերջնարդյունքներ	ԿԱՐՈՂԱՆԱ . առանձնացնել պատմությունից կերպարներ . կատարել վերլուծական աշխատանքներ . հստակ ձևակերպել առաջադրանքների պատասխանները . բնութագրի կերպարները . կատարի քերականական առաջադրանքներ						

	. կատարի վերլուծական առաջադրանքներ			
Գործունեությունն Եր / ժամ/տևողություն/	ՈՒսոյմնական գործունեություն աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ուսուցիչներ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Սկիզբ՝ 5 ր Ընթացք՝ 20ր Առաջադրանք-ների կատարում՝15ր 5ր ավարտ	Բացեն դասագրքերը, Պատրաստվեն նոր դասին; Ներկայացնել տնային աշխատանքները: Պատասխանում են հարցերին, քերականական աշխատանք կատարելու համար դասից դուրս են գրում բառեր, կատարում են վերկուծություններ:	Ողջունում է դասարանին, .Հիշեցնում է դասի թեման. .Ստուգում է տնային աշխատանքները. .Բացատրում է անհասկանալի մասերը. Հարցերի միջոցով աշակերտներին ներգրավում է դասապրոցեսի մեջ. . Հանձնարարում է միմյանց շարունակելով կարդալ դասը. Բաժանում է քարտեր, որոնց վրա կան առանձին գրված առաջադրանքներ. . Հսկում է, տալիս է ուղղորդող հարցեր. . Ամփոփում է դասը, հանձնարարում տնային աշխատանք :	Ի՞նչ կապ կարող է ունենալ <<ազռավ >> բառը փաթիլ և կաթիլ բառերի հետ: Փաթիլներն ինչո՞ւ դարձան կաթիլներ: Ի՞նչ տարբերություն կա փաթիլի և կաթիլի միջև:	Կանխագուշակումներ՝ հենակետային բառերով: Շերտավորված ուսուցում. Պարզից բարդին անցնելով զարգացնել աշակերտների պատասխանները
Տնային աշխատանք	Կարդալ <<Կաթիլը>>դասը, գրել էջ 33-ից առաջադրանք 2-ը:			

Մեթոդմիավորման նախագահ՝ ----------Ա.Ղարիբյան

Փոխտնօրեն՝ ----------Ն.Մխիթարյան